

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ի 2017 թվականի N _____-Ն

«Վ. ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 149 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ», «Գ. ԶՈՀՐԱՊԻ ԱՆՎԱՆ N 43 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ԵՎ «ԱՐԹԻԿԻ N 7 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 664-Ն ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 575-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ, 64-րդ հոդվածները և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 24-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Երևան քաղաքի Հ. Էմինի նրբանցք 4 հասցեում գտնվող 110752.4 հազ. դրամ սկզբնական արժեքով և 3046.34 քառ. մետր արտաքին մակերեսով ընդհանուր մակերեսով ուսումնական մասնաշենքերը և 0.208747 հեկտար մակերեսով հողատարածքը (30.03.2012թ. N 30032012-01-0292 անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի գրանցման վկայական) հետ վերցնել «Վ. Դավթյանի անվան N 149 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից (պետական գրանցման համար՝ 264.210.06121) և թողնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը:

2. «Վ. Դավթյանի անվան N 149 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 264.210.06121) միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Մ. Քաջունու անվան N 54 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համարը՝ 264.210.06117):

3. Սահմանել, որ՝

1) «Վ. Դավթյանի անվան N 149 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը «Մ. Քաջունու անվան N 54 ավագ դպրոց» պետական

ոչ առևտրային կազմակերպությունն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան.

2) վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են՝ «Մ. Քաջունու անվան N 54 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

4. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ Երևան քաղաքի Բուռնազյան 37 հասցեում գտնվող 22093.3 հազ. դրամ սկզբնական արժեքով և 3526.3 քառ. մետր ընդհանուր մակերեսով ուսումնական մասնաշենքերը, 28500.0 հազ. դրամ սկզբնական արժեքով և 13 քառ. մետր ընդհանուր մակերեսով կաթսայատունը, 11 քառ. մետր /22 խ.մ/, 49.4 /77.5 խ.մ/ մակերեսով պարիսպները և 0.486831 հեկտար մակերեսով հողատարածքը (30.11.2015թ. N 30112015-01-0087 անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի գրանցման վկայական) հետ վերցնել «Ա. Իսահակյանի անվան N 16 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից (պետական գրանցման համար՝ 222.210.00169) և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համար՝ 273.210.03882)՝ նպատակային նշանակությամբ օգտագործման համար:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝

1) սույն որոշման 4-րդ կետում նշված աշխատանքների ավարտից հետո, մեկամսյա ժամկետում, լուծել «Ա. Իսահակյանի անվան N 16 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 12.03.2013 թվականին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 36/0013 պայմանագիրը սահմանելով որ պայմանագրի լուծման և օգտագործման իրավունքի դադարեցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման «Ա. Իսահակյանի անվան N 16 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին.

2) սույն որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո, քառամսյա ժամկետում «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել սույն որոշման 4-րդ կետում նշված տարածքի անհատույց օգտագործման մասին պայմանագիր՝ սահմանելով, որ պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

6. «Գ. Զոհրապի անվան N 43 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 278.210.03332) միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Ա. Իսահակյանի անվան N 16 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համարը՝ 222.210.00169):

7. Սահմանել, որ՝

1) «Գ. Չոիրապի անվան N 43 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը «Ա. Իսահակյանի անվան N 16 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան.

2) վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են՝ «Ա. Իսահակյանի անվան N 16 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

8. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Տուֆագործների 24 հասցեում գտնվող դպրոցի շենքը՝ 7316.7 քառ. մետր ընդհանուր մակերեսով, ենթակայանը՝ 40.5 քառ. մետր ընդհանուր մակերեսով, օժանդակ շինությունը՝ 25 քառ. մետր ընդհանուր մակերեսով, պարիսպը՝ 87.12/200.37 խ.մ/ քառ. մետր ընդհանուր մակերեսով և 0.76 հա մակերեսով հողատարածքը (իրավունքի գրանցման 2017 թվականի հունիսի 2-ի N 02062017-08-0008 վկայական), հետ վերցնել «Արթիկի N 7 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և թողնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը:

9. «Արթիկի N 7 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 15.210.00447) միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Արթիկի N 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համարը՝ 15.210.00443):

10. Սահմանել, որ՝

1) «Արթիկի N 7 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդը «Արթիկի N 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան.

2) վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են «Արթիկի N 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

11. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 2-րդ, 6-րդ, 9-րդ կետերում նշված՝

1) միացման արդյունքում ընդլայնված պետական ոչ առևտրային կազմակերպություններին հանձնվող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, գույքի կազմի, արժեքի, միացման պայմանագրերի և փոխանցման ակտերի հաստատումը, ինչպես նաև դրանց կանոնադրություններում վերակազմակերպումից բխող համապատասխան փոփոխությունների կատարումը և պետական գրանցումը.

2) միացված պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝

ա. գործունեության դադարման պետական գրանցումը.

բ. սովորողների ուսումնառության բնականոն գործընթացը:

12. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված աշխատանքների ավարտից հետո, մեկամսյա ժամկետում, լուծել «Վ. Դավթյանի անվան N 149 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 26.03.2012 թվականին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 16/0012 պայմանագիրը սահմանելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման «Վ. Դավթյանի անվան N 149 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին.

13. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն՝ սույն որոշման 1-ին և 8-րդ կետերում նշված Երևան քաղաքի Հ. Էմինի նրբանցք 4 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Տուֆագործների 24 հասցեներում գտնվող անշարժ գույքերի հետագա օգտագործման վերաբերյալ:

14. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունիսի 11-ի «Ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու մասին» N 664-Ն որոշման հավելվածի 103-րդ և 2010 թվականի մայիսի 6-ի «Ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու մասին» N 575-Ն որոշման հավելվածի 2-րդ, 67-րդ կետերը:

15. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ Վ. ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ N149 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ», «Գ. ԶՈՀՐԱՊԻ ԱՆՎԱՆ N43 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ԵՎ «ԱՐԹԻԿԻ N7 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 575-Ն ԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 664-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ուսումնական հաստատություններում աշակերտների թվի նվազման և ուսումնական տարածքների (շենք) օպտիմալ օգտագործմամբ:

Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

«Երևանի Վ. Դավթյանի անվան N149 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսումնառում է 130 սովորող, սակայն դպրոցը նախատեսված է 290 սովորողի համար, «Երևանի Մ. Քաջունու անվան N54 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 302 սովորող, նախատեսված է 600 սովորողի համար, «Գ. Զոհրապի անվան N43 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 253, նախատեսված է 800 սովորողի համար, «Երևանի Ա. Իսահակյանի անվան N 16 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 76, նախատեսված է 575 սովորողի համար, «Արթիկի N7 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 132, նախատեսված է 400 սովորողի համար և «Արթիկի N 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 172, նախատեսված է 450 սովորողի համար:

«Երևանի Վ. Դավթյանի անվան N149 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելով և միացնելով «Երևանի Մ. Քաջունու անվան N54 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, «Գ. Զոհրապի անվան N43 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ «Երևանի Ա. Իսահակյանի անվան N 16 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, իսկ «Արթիկի N7 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ «Արթիկի N 3 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հնարավորություն կստեղծվի ուսումնական տարածքների օպտիմալ օգտագործման համար, ինչի արդյունքում միացվող պետական ոչ առևտրային կազմակերպություններում աշակերտների բնականոն ուսումնական գործընթացը կկազմակերպվի առավել արդյունավետ, ինչն էլ իր հերթին կնպաստի կրթության որակի բարձրացմանը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 126-րդ հոդվածը սահմանում է. «Կազմակերպության վերակազմակերպումը, ինչպես նաև դրա նկատմամբ պարտավորական կամ այլ իրավունքներ ունեցող անձանց փոփոխությունը հիմք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե տեղի չի ունենում աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատում:»:

Միացման արդյունքում, նոր հաստիքացուցակի հաստատմամբ հնարավոր են հաստիքների կրճատումներ, մասնավորապես վարչական և ուսումնաօժանդակ, պայմանավորված նոր ուսումնական տարվա սկզբին արտադրական ծավալների փոփոխմամբ / աշակերտների թվի փոփոխություն/:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նախատեսում է բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննական համակարգում կատարել բարփոխումներ, ինչը կհանգեցնի տարբեր ժամանակահատվածներում «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացնելու ընդունելության քննություններ: Նշված քննությունների իրականացման բարձր որակը ապահովվելու, ինչպես նաև առարկայական մասնագետների համար աշխատանքային պայմաններ ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել կազմակերպությանը ամրացնել լրացուցիչ տարածքներ:

Երևանի Ա. Իսահակյանի անվան N 16 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման արդյունքում ազատվող Երևան քաղաքի Բուռնազյան 37 հասցեում գտնվող ուսումնական մասնաշենքը ՀՀ կրթության և գիտության նախարարությունը գտնում է նպատակահարմար այն ամրացնելու կազմակերպությանը:

Ակնկալվող արդյունքը

Հանրության բարձրորակ կրթության ապահովման համար ստեղծել պայմաններ, կրթական ուսումնական հաստատությունները համալրել մանկավարժական ներուժով:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Երևանի Վ. Դավթյանի անվան N149 ավագ դպրոց», «Գ. Ջոհրապի անվան N43 ավագ դպրոց» և «Արթիկի N7 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, գույք հետ վերցնելու, գույք ամրացնելու և ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն և 2009 թվականի հունիսի 11-ի N 664-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Երևանի Վ. Դավթյանի անվան N149 ավագ դպրոց», «Գ. Ջոհրապի անվան N43 ավագ դպրոց» և «Արթիկի N7 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու, գույք հետ վերցնելու, գույք ամրացնել և ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի N 575-Ն և 2009 թվականի հունիսի 11-ի N 664-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԵՐԵՎԱՆԻ Վ. ԴԱՎԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ N149 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ», «Գ. ԶՈՀՐԱՊԻ ԱՆՎԱՆ N43 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ԵՎ «ԱՐԹԻԿԻ N7 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 575-Ն ԵՎ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 664-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ/Հ	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ արդարադատության նախարարություն	<p>Առաջարկում է</p> <p>1. Նախագծի վերնագրում «կազմակերպությունը» բառն անհրաժեշտ է փոխարինել «կազմակերպությունները» բառով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջները:</p> <p>2. Նախագծի 11-րդ կետում «միացած պետական ոչ առևտրային կազմակերպություններին» բառերն անհրաժեշտ է փոխարինել «միացման արդյունքում ընդլայնված պետական ոչ առևտրային կազմակերպություններին» բառերով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջները:</p> <p>3. Նախագծի 13-րդ կետում «տալ առաջարկություն» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՀՀ կառավարություն է ներկայացնում առաջարկություն» բառերով:</p> <p>4. Նախագծի 14-րդ կետում ՀՀ</p>	<p>1. Ընդունվել է</p> <p>2. Ընդունվել է</p> <p>3. Ընդունվել է</p> <p>4. Ընդունված է</p>	<p>1. Որոշման նախագծի վերնագրում «կազմակերպությունը» բառն փոխարինել է «կազմակերպությունները» բառով:</p> <p>2. Որոշման նախագծի 11-րդ կետում «միացած պետական ոչ առևտրային կազմակերպություններին» բառերն փոխարինվել է «միացման արդյունքում ընդլայնված պետական ոչ առևտրային կազմակերպություններին» բառերով:</p> <p>3. Որոշման նախագծի 13-րդ կետում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն:</p> <p>4. Որոշման նախագծի 14-րդ կետը առաջարկին համապատասխանեցվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության</p>

		<p>կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի 575-Ն և 2009 թվականի հունիսի 11-ի N 664-Ն որոշումներին կատարված հղումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի և 43-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:</p>		<p>օրենքի 39-րդ հոդվածի 4-րդ մասի և 43-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:</p>
2.	<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 2017-07-18 թիվ 01/9-2/13068-17</p>	<p>1. Նախագծի 4-րդ կետով նախատեսվում է «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ ՀՀ սեփականությունը հանդիսացող՝ Երևան քաղաքի Բուռնազյան 37 հասցեում գտնվող 3526.3 քառ. մետր ընդհանուր մակերեսով ուսումնական մասնաշենքերը (13 քառ. մետր ընդհանուր մակերեսով կաթսայատունը, 11 քառ. մետր մակերեսով պարիսպները և 0.486831 հեկտար մակերեսով հողատարածքը) հետ վերցնել «Երևանի Ա. Իսահակյանի անվան N16 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:</p> <p>Միաժամանակ, Նախագծի 12-րդ կետով նախատեսվում է Երևան քաղաքի N Էմինի նրբանցք 4 հասցեում գտնվող ուսումնական մասնաշենքերից 1628.3 քառ. մետր ընդհանուր մակերեսով մասնաշենքը ամրացնել «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին, վերջինս 8 աշխատող ունեցող «Լիցենզավորման գործակալություն» առանձնացված ստորաբաժանմանը տրամադրելու համար, իսկ 1141.1 քառ. մետր ընդհանուր մակերեսով</p>	<p>1. Ընդունվել է</p>	<p>1. Լրամշակվել է Որոշման նախագծից հանվել է 12-րդ և 14-րդ կետերը և լրամշակվել է 13-րդ կետը /լրամշակումից հետո 12-րդ կետը/:</p>
		<p>2. Ընդունվում</p>	<p>2. Որոշման նախագծի</p>	

		<p>մասնաշենքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն (ԱՓՇԱՏԿ)» հիմնադրամին:</p> <p>Այս կապակցությամբ հայտնում ենք, որ Նախագծում ներկայացված չեն համապատասխան հիմնավորումներ վերը նշված տարածքները հիշյալ կազմակերպություններին օգտագործման իրավունքով տրամադրելու նպատակահարմարության և անհրաժեշտության վերաբերյալ, պարզ չէ, արդյոք պետական սեփականություն հանդիսացող գույքի տնօրինման հարցը քննարկվել է գույքի առավել արդյունավետ օգտագործման համատեքստում: Միաժամանակ, պարզ չէ, տարածքների տրամադրումը կհանգեցնի ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ միջոցների հատկացման անհրաժեշտության, թե ոչ:</p> <p>Հարկ է նշել նաև, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության 03.02.2017թ. N1/12/1288-17 գրությամբ ներկայացվել էր ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով «Լիցենզավորման գործակալություն» առանձնացված ստորաբաժանմանը նախատեսվում էր տրամադրել տարածք Ամիրյան 26 հասցեում և ընդամենը 109.2 քառ. մետր ընդհանուր մակերեսով (Նախագծով նախատեսված 1628.3 քառ. մետրի դիմաց):</p> <p>2. Նախագծի 13-րդ կետի 2-րդ ենթակետով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին հանձնարարվում է ապահովել Երևան քաղաքի N Էմինի նրբանցք 4 հասցեում գտնվող անշարժ գույքի գույքային բաժանումը, առանձին գույքային միավորների պետական գրանցումը, մինչդեռ պարզ չէ, թե ինչ աղբյուրներից է նախատեսվում կատարել վերը նշված գործարքից առաջացող ծախսերը:</p>	<p>է</p> <p>2.Ընդունվել է</p>	<p>13-րդ կետը լրամշակվել է՝ հանվել է նշված կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը/լրամշակումից հետո 12-րդ կետը/:</p> <p>3. Որոշման նախագծի 8-րդ կետը ճշգրտվել է Արթիկ քաղաքի Տուֆագործների 24 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման 07.04.20114 N 01072015-08-0003 վկայականի հետ, որտեղ նշված է դպրոցը 7316.7 քառ.մետր է:</p>
--	--	--	-------------------------------	--

		<p>3. Առաջարկում ենք Նախագծի 8-րդ կետում ճշգրտել ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքի Տուֆագործների 24 հասցեում գտնվող Արթիկի N7 ավագ դպրոցի շենքի մակերեսը, քանի որ տվյալ կետում նշված է 7316.7 քմ, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարության 07.03.2017թ. N 04/2897-17 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ՊՈԱԿ-ների նպատակային և ձեռնարկատիրական գործունեության տարեկան ֆինանսատնտեսական արդյունքների մասին հաշվետվության մեջ՝ 6755.9 քմ:</p>	3.Ընդունվում է	
3.	<p>ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն</p> <p>2017-07-07</p> <p>01/15.1/4268-17</p>	<p>1.Առաջարկում ենք վերանայել որոշման Նախագծի 5-րդ կետի 2-րդ ենթակետում, 13-րդ կետի 1-ին ենթակետում տեղ գտած <<նոտարական վավերացման>>-ը վերաբերող պարտադիր պահանջը, հաշվի առնելով ՀՀ կառավարության <<Նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին>> 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1851-Ն որոշման պահանջները:</p> <p>2.Առաջարկվում է վերախմբագրել Նախագծի 13-րդ կետի 3-րդ կետում նշված <<23-րդ կետի>> բառերը, քանի որ Նախագիծը պարունակում է ընդամենը 17 կետ:</p> <p>3.Որոշման Նախագծի տեղեկանք-հիմնավորման մեջ բացակայում է միացման ձևով վերակազմակերպման արդյունքում հաստիքների հնարավոր կրճատման, ինչպես նաև այդ կրճատվող հաստիքները զբաղեցնող անձանց այլ աշխատանքի տեղավորման հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը:</p> <p>4.Առաջարկվում է վերախմբագրել Նախագծի վերնագիրը, առաջնորդվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով:</p>	<p>1.Չի ընդունվել</p> <p>2.Ընդունվել է</p> <p>3.Ընդունվել է</p> <p>4.Ընդունվել է</p>	<p>1. Նախագծի 5-րդ կետի 2-րդ ենթակետում, 13-րդ կետի 1-ին/լրամշակումից հետո 12-րդ կետը/ ենթակետում տեղ գտած <<նոտարական վավերացման>>-ը վերաբերող պարտադիր պահանջի համար հիմք են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 686-րդ և 687-րդ հոդվածները: Այս պահանջը բխում է նաև ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության /որպես լիազոր մարմին/ դիրքորոշումից:</p> <p>2. Որոշման նախագծի 13-րդ կետը լրամշակվել է և հանվել է 2-րդ և 3-րդ ենթակետերը /լրամշակումից հետո 12-րդ կետ/:</p> <p>3. Նախագծի հիմնավորման մեջ լարացվել է կազմակերպություններ ի վերակազմավորման ժամանակ աշխատողների հետագա աշխատանքի տեղավորման հարցը:</p> <p>4.Որոշման նախագծի վերնագիրը լրամշակվել է:</p>
4.	ՀՀ կառավարությանն	Առաջարկում է	1.Ընդունվել է	1.Որոշման

<p>աղընթեր պետական գույքի կառավարման վարչություն 2017-07-17 թիվ 01/22.23/4584-17</p>	<p>1. Որոշման Նախագծի նախաբանում հղում կատարել «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ոչ թե 9-րդ, այլ 24-րդ հոդվածին,</p> <p>2. Որոշման նախագծի 1-ին կետում լրացնել <110752.4 հազ.դրամ սկզբնական արժեքով> բառերը, իսկ <3046.34 քառ. մետր> բառերից հետո լրացնել <արտաքին մակերեսով> բառերը,</p> <p>3. Որոշման նախագծի 4-րդ կետում լրացնել 3526.3 քառ. մետր մակերեսով ուսումնական մասնաշենքի սկզբնական արժեքը՝ 22093.3 հազ.դրամ, իսկ 13 քառ.մետր մակերեսով կաթսայատան սկզբնական արժեքը՝ 28500.0 հազ.դրամ,</p> <p>4. Նախագծի 4-րդ կետից հանել <և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համար՝ 273.210.03882)՝ նպատակային նշանակության օգտագործման համար> բառերը, 5-րդ կետից հանել <սույն որոշման 4-րդ կետում նշված աշխատանքների ավարտից հետո> բառերը և 2-րդ ենթակետը, հանել Որոշման նախագծի 12-րդ և 15-րդ կետերը, 13-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը, քանի որ ՀՀ պետական բյուջեի մուտքերն ապահովելու նպատակով նախատեսվում է պետական սեփականություն հանդիսացող ազատ տարածքները օտարել կամ տրամադրել վարձակալության: Ըստ այդմ խմբագրել որոշման նախագիծը: Միաժամանակ հաշվի առնելով, որ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքը հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով կարող է տրամադրվել որևէ ոլորտի կամ տարածաշրջանի զարգացմանն ուղղված /ծրագրի օրինակելի ձևին համապատասխանող/ ծրագրի առկայության դեպքում՝ ծրագրի</p>	<p>2. Ընդունվել է</p> <p>3. Ընդունվել է</p> <p>4. Ընդունվում է մասնակի</p>	<p>նախաբանում հղում է կատարվել «Պետական ոչ առևտրային կազմակերպություններ ի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածին,</p> <p>2. Որոշման նախագծի 1-ին կետում առաջարկին համապատասխան կատարվել կատարվել է լրացում:</p> <p>3. Որոշման նախագծի 4-րդ կետում առաջարկին համապատասխան կատարվել կատարվել է լրացում:</p> <p>4. Որոշման նախագիծը լրամշակվել է, հանվել է 12-րդ և 14 կետերը ու 13-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը/լրամշակ ուից հետո 12-րդ կետը/: Իսկ ինչ վերաբերվում է օպտիմալացման արդյունքում ազատված տարածքները օտարմանը, ապա այնկարող է օպտիմալացվել միայն ուսումնական պետական ոչ առևտրային կազմակերպություններին տարածքով ապահովելուց հետո:</p>
--	---	--	---

		<p>իրականացման համար անհրաժեշտ ժամկետով, եթե հիմնադրամի կողմից առաջարկվող ծրագիրը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրում ամրագրված պետություն-մասնավոր հատված համագործակցության սկզբունքին և նպատակաուղղված է պետություն-մասնավոր հատված համագործակցության զարգացմանը՝ տնտեսական կամ սոցիալական որևէ ոլորտում, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն առաջարկում է առաջնորդվել ՀՀ կառավարության վերը նշված որոշմամբ հաստատված կարգի պահանջներով:</p>		
5.	<p>ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կառավարման կոմիտե 2017-07-04 ԼՄ/4124-17</p>	<p>Առաջարկում է. 1. Նախագծի 1-ին կետում <<(անշարժ գույքի օգտագործման իրավունքի գրանցման 24.10.2007թ. անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2244239 վկայական)>> բառերը փոխարինել <<(30.03.2012թ. թիվ 30032012-01-0292 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական)>> բառերով: 2. Նախագծի 4-րդ կետում <<(անշարժ գույքի օգտագործման իրավունքի գրանցման 09.10.2008թ. անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2612879 վկայական)>> բառերը փոխարինել <<(30.11.2015թ. թիվ 30112015-01-0087 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական)>> բառերով: 3. Նախագծի 13-րդ կետի 3-րդ ենթակետում <<23-րդ կետի 2-րդ ենթակետում>> բառերը փոխարինել <<12-րդ կետի 2-րդ ենթակետում>> բառերով:</p>	<p>1.Ընդունվել է, 2. Ընդունվել է 3.Ընդունվել է</p>	<p>1.Որոշման նախագծի 1-ին կետում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն: 2. Որոշման նախագծի 1-ին կետում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն: 3. Նախագծի 13-րդ կետը /լրամշակումից հետո 12-րդ կետը/ լրամշակվել է և 3-րդ ենթակետը հանվել է:</p>